ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂՈՒՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ <<ՀՀ ԱՍՀՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ>> ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԵՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Սպիտակ երկու հազար տասներեք թվականի փետրվարի տասնհինգ

Քաղաքացի Աղունիկ Հայրապետյանը (անձնագիր AC 0446226, տրված՝ 30.10.1998թ. 052-ի կողմից), մի կողմից Կողմ 1 և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության << Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա , ում անունից հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Սպիտակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Թեհմինե Վանիկի Գասպարյանը (անձնագիր՝ AM0383450, տրված ՝ 19.07.2011թ. 052-ի կողմից), որը գործում է երկու հազար տասներեք թվականի փետրվարի տասնչորսին տրված N ՄՄ/ԱգԱ-1/1427-13 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2010թ. դեկտեմբերի 14-ին երկուստեք կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագիրը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1. Կողմերը որոշել են 2010թ. դեկտեմբերի 14-ին երկուստեք կնքված << Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրում /այսուհետ՝ Պայմանագիրն կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1/ Պայմանագրի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև երկու հազար տասնյոթ թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ:

Երկու հազար տասնչորս, երկու հազար տասնհինգ, երկու հազար տասնվեց, երկու հազար տասնյոթ թվականների համար սույն պայմանագիրը կգործի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որից հետո կողմերի միջև կկնքվի լրացուցիչ պայմանագիր:

2.2.5 ենթակետը ձևակերպել նոր բովանդակությամբ

<<2.2.5 վարձատուն պարտավորվում է իր հաշվին կատարել շենքի ջեռուցման, աղբահանության և ջրամատակարարման վարձավճարները

2/ Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3.1. Օբյեկտի ամսական վարձավճարը սահմանվում է 239.166 / երկու հարյուր երեսունինը հազար մեկ հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ:

3/ Պայմանագրի 3.1.1. կետը հանել:

2. Պայմանագրի գործողության ժամկետը

2.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից

2.2 Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև երկու հազար տասներկու թվականի սեպտեմբերի տասներկուսին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 /չորս/ օրինակից:

2.4 Սույն պայմանագրի և Հիմնական Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն պայմանագրով սահմանված դրույթը:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2 Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.3 Սույն պայմանագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Կողմ-2

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայության
աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի
լիազորած անձ՝ Սպիտակի ՍԱՏԲ-ի գլխ. մասնագետ
Թեհմինե Վանիկի Գասպարյան (անձնագիր՝
AM0383450, տրված 19.07.2011թ. 052-ի
կողմից)

(ստորագրություն)

Կողմ-1

Քաղաքացի Ադունիկ Հայրապետյան
(անձնագիր՝ AC0446226, տրված 052-
ի կողմից 30.10.1998թ.) բնակ. հասցե՝
ՀՀ Լոռու մարզ ք. Սպիտակ, Առափնյա փող.,
59
ՎՏԲ բանկ Սպիտակի մ/ճ
Հ/Հ 16032109992302

(ստորագրություն)

Վավերացման մակագրություն կնքված պայմանագրի վրա

Երկու հազար տասներեք թվականի փետրվարի տասնհինգին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Սպիտակի տարածքային նոտար Վաչիկ Մաթոսյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, գործունակությունը և իրավունակությունը ստուգված են:
Գրանցված է սեղանատյանում _____ ով
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքի
ՆՈՏԱՐ՝ _____